

« 26 » հուլիս 2022թ. No 3234 – Լ

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՇՈՒՐՋՕՐՅԱ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ՊԱՀԱՆՋՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՀՈՍՊԻՏԱԼԱՑՎԱԾ ՍՈՒՐ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՎԱՐԱԿԻ
ԱԽՏԱՆՇԱՆՆԵՐՈՎ ԿԱՄ ԾԱՆՐ ՍՈՒՐ ՇՆՉԱՌԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱՄ
ԹՈՔԱԲՈՐԲԵՐՈՎ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ
(COVID-19) ՆԿԱՏՄԱՄԲ (COVID-19) ՊՈԼԻՄԵՐԱԶԱՅԻՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ
ՄԵԹՈԴՈՎ ԿԱՄ ՀԱՐՈՒՑՉԻ ՀԱԿԱԾՆԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԱՐԱԳ ԱԽՏՈՐՈՇԻՉ
ԹԵՍՏԵՐՈՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի
հունիսի 11-ի թիվ 728-Լ որոշման հավելվածով հաստատված Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ
կետի 20-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող
կազմակերպություններում (անկախ սեփականության, կազմակերպաիրավական ձևից
և գերատեսչական պատկանելիությունից) շուրջօրյա հսկողություն պահանջող
պայմաններով հոսպիտալացված սուր շնչառական վարակի ախտանշաններով կամ
ծանր սուր շնչառական հիվանդություններով կամ թոքաբորբերով պացիենտներին
հետազոտել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) նկատմամբ
պոլիմերազային շղթայական ռեակցիայի (այսուհետ՝ ՊՇՌ) մեթոդով կամ COVID-19
հակաձնի հայտնաբերման արագ ախտորոշիչ թեստերով՝ համաձայն
Առողջապահության նախարարի 2020 դեկտեմբերի 10-ի թիվ 4379-Լ հրամանի
պահանջների:

2. Սահմանել, որ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ
պայմաններով բժշկական օգնության և սպասարկման դեպքերում սույն հրամանի
առաջին կետով թվարկված հետազոտությունների արժեքները ներառված են ՀՀ
առողջապահության նախարարի 2022 թվականի հունվարի 20-ի թիվ 240-Լ հրամանով
հաստատված համապատասխան ծառայությունների գներում:

3. Առողջապահության նախարարության «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վարդան Ավագյանին՝ սահմանված կարգով ապահովել COVID-19 ՀԾ ԱԱԹ-ի բաշխումն՝ ըստ հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի:

4. Առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրեն Արտավազդ Վանյանին.

1) ապահովել սույն հրամանի 1-ին կետում նշված հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների կողմից ուղեգրված նմուշների կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ մեթոդով հետազոտությունների իրականացումը,

2) սույն հրամանի 1-ին կետում նշված հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններին տրամադրել կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման համար ՊՇՌ հետազոտությունների նպատակով նմուշառման հավաքածուներ (նմուշառման փորձանոթներ և ձողեր)՝ ըստ հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի:

5. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝ ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ